ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի երիտասարդների հիմնախնդիրները և դրանց կարգավորման ուղիները

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն

Հայաստան, Երևան
2013

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի երիտասարդների հիմնախնդիրները և դրանց կարգավորման ուղիները

Սոցիոլոգիական հետազոտություն արդյունքների վերլուծություն

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում՝ «Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին (հեղինակներին)՝ «Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Բովանդակություն

1.	Սոցիոլոգիական հետազոտության ծրագիր. Հիմնախնդրի նկարագիր	4
2.	Սոցիոլոգիական հետազոտության նպատակն ու խնդիրները	6
3.	Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն և եզրակացություն. Երիտասարդների հիմնախնդիրները Շիրակի մարզի Գյումրի քաղաքում	7
4.	Զբաղվածության հիմնախնդիր	9
5.	Կրթական համակարգին առնչվող հիմնախնդիրներ	11
6.	Գործազրկություն և աղքատություն	13
7.	Կոռուպցիոն ռիսկերի առկայություն	15
8.	Ընտանիքը՝ որպես սոցիալական փոքր խումբ: Կարծրացած մտածելակերպ և դաստիարակության հիմնախնդիրներ	17
9.	Գենդերային պատկանելիությամբ և սեռային կողմնորոշմամբ պայմանավորված հիմնախնդիր	18
10.	Իրավունքների ոտնահարման հիմնախնդիր	19
11.	Ազատ ժամանցի կազմակերպման հիմնախնդիր	20
12.	Առողջապահական և առողջ ապրելակերպին առնչվող հիմնախնդիրներ	21
13.	Առաջարկներ	22
14.	Շիրակի մարզի Գյումրի, Մարալիկ, Արթիկ քաղաքների սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն	24

Սոցիոլոգիական հետազոտության ծրագիր.

Հիմնախնդրի նկարագիրը:

2012 թվականի փետրվարին ներկայացվեց «Հայաստանի երիտասարդության մասին ազգային զեկույցը»: Հարցմանը մասնակցել էին 1200 երիտասարդ, որոնցից 506 բնակվում են Երևանում, 330՝ Հայաստանի այլ քաղաքներում և 351՝ գյուղերում: Համաձայն սույն զեկույցի՝ 2012 թվականի դրությամբ, Հայաստանում բնակվում էին 720 հազար երիտասարդ: Նրանց կեսը՝ գործազուրկ է: Աշխատանքով ապահովված է միայն 48.7%, իսկ 32.6% տնտեսապես ոչ ակտիվ է: Համաձայն այս զեկույցի 38.1% բավարարված է բուհական կրթությամբ. դժգոհողների քանակն ավելի մեծ է: Իսկ ահա 64.4% ցանկանում է սովորել արտասահմանում:

Համաձայն «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության» և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից իրականացված «Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» զեկույցի, վերջին մեկ տարվա ընթացքում երիտասարդների անդամությունը տարբեր կառույցներին հատկապես ՀԿ-ներում կազմել է 5,7%, որպես վարձատրվողներ՝ 1,2%, ուսանողական խորհուրդներում՝ 6,6 %: Հարցված երիտասարդների 45% պատասխանել է, որ միանշանակ չի ցանկանում ներգրավվել ՀԿ-ներում, 51,9% պատասխանել է, որ չի ցանկանում ներգրավվել քաղաքացիական նախաձեռնության խմբերում: Երիտասարդների զբաղվածության ձգտումների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առաջիկա 3 տարիներին նրանց 10.5%-ը սեփական գործը հիմնելու ծրագրեր ունի, 9.3%-ը մտածում է ցանկացած, իսկ 7.3%-ը՝ արտերկրում մասնագիտական աշխատանք գտնելու մասին, 2.6%-ն էլ արտերկրում բիզնես հիմնելու հավակնություններ ունի: Հարցվածների 30.1%-ը նշել է, որ աշխատանքի հետ կապված ծրագրեր չունի: Ընդ որում, հարկ է նշել, որ հարցված երիտասարդների 73.3 %-ը տվյալ ժամանակահատվածում չէր զբաղվում եկամուտ ապահովող կամ կամավորական գործունեությամբ: Համաձայն սույն զեկույցի՝ աշխատանք փնտրելու համար ամենատարածված վարքային մարտավարությունը ծանոթներին դիմելն է. Աշխատանք փնտրող երիտասարդների 67%- ը հենց այս ուղիով է փորձում գտնել աշխատանք:

Սույն հետազոտության շրջանակներում հարցված երիտասարդների 6.6%-ը նշել է, որ ներգրավված է ուսխորհուրդների աշխատանքներում: Երիտասարդների գերակշիռ մասը ցանկություն չունի ներգրավվել քաղաքական կուսակցությունների, ՏԻՄ-երի, ՀԿ-ների,

քաղաքացիական նախաձեռնող խմբերի, ներբուհական/ներդպրոցական կառույցների աշխատանքներում:

Հաշվի առնելով սույն զեկույցի արդյունքները և համայնքներում ներկայիս իրավիճակը՝ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ համայնքներում երիտասարդների ակտիվացմանը և որոշումների կայացման գործընթացում նրանց դերի բարձրացման խնդրին:

Քառնթերփարթ Ինթերնեշնելի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում իրականցվում է «Համայնքային երիտասարդների շահերի պաշտպանություն» ծրագիրը՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության կողմից: Ծրագիրն իրականացվում է Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքներում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն, որի արդյունքում իրականվել է որակական հետազոտություն՝ ֆոկուս-խմբային հանդիպում-քննարկում:

Սոցիոլոգիական հետազոտության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել Շիրակի մարզի Գյումրի քաղաքի երիտասարդների հիմնախնդիրները և գտնել այն ուղիները, որոնք կնպաստեն այդ հիմնախնդիրների կարգավորմանը:

Հետազոտության նպատակից ելնելով՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել երիտասարդներին հուզող հիմնախնդիրները,
- պարզել այդ հիմնախնդիրների պատճառները,
- բացահայտել այդ հիմնախնդիրների կարգավորման համար երիտասարդների կողմից առաջադրվող ուղիները,
- բացահայտել ՏԻՄ-երում և տարբեր պետական կառույցներում վերաբերմունքը երիտասարդներին և նրանց հիմնախնդիրներին,
- բացահայտել երիտասարդների հասարակական կազմակերպություններում ներգրավվածության մակարդակը,
- պարզել, թե որքանով են երիտասարդները պատրաստակամ ակտիվություն ցուցաբերել քաղաքացիական կյանքում:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն և եզրակացություն. Երիտասարդների հիմնախնդիրները Շիրակի մարզի Գյումրի քաղաքում

Սոցիոլոգիական հետազոտության իրականացման նպատակով նախապես կազմվել է ֆոկուս խումբ: Հետազոտության իրականացման գործընթացին խմբում ներկա էին 14 մասնակից՝ 16-28 տարիքային խմբի, որոնցից երկուսը արական սեռի ներկայացուցիչներ էին, իսկ տասներկուսը՝ իգական:

Մասնակիցներից երեքն ավարտել են Գյումրու բարձրագույն ուսումնական հաստատություններ, իսկ տասնմեկը դեռևս հանդիսանում են այդ հաստատությունների ուսանողներ: Հարցվողներից բոլորը հանդիսանում են Գյումրի քաղաքում գործող տարբեր հասարակական կազմակերպությունների կամավորներ:

Հարցվողներից ոչ ոք ընդգրկված չեն ՏԻՄ կառույցներում, քանի որ առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք խոչընդոտում են տվյալ մարմնի անդամ լինելուն: Նախ՝ երիտասարներից պահանջվում է մեծ աշխատանքային փորձ տվյալ կառույցում աշխատելու համար և համաձայն Գյումրու երիտասարդների կարծիքի՝ այնտեղ աշխատում են միայն <<ծանոթ կամ բարեկամ>> լինելու դեպքում: Այնուամենայնիվ, այն հարցին, թե արդյոք կցանկանան երիտասարդները համալրել ՏԻՄ անձնակազմի շարքերը, երիտասարդներից յոթը պատասխանեցին, որ կցանկանային: Նրանք գտնում են, որ այդ հանգամանքը կտա մեծ հնարավորություն համայնքային երիտասարդության հիմնախնդիրներն ավելի լսելի դարձնել պետական բարձր օղակներում և եթե նրանք ունենան հնարավորություն որևէ կերպ խրախուսել, կամ գուցե և սեփական նախաձեռնությամբ իրականացնել երիտասարդներին ողղված ծրագրերը, ապա հարցվողները պատրաստակամ են լրացնել անգամ բոլոր կրթական կամ մասնագիտական բացեր, որպեսզի ընդգրկվեն ՏԻՄ ապարատում:

Հարցվողներից մեկը նշեց, որ ինքը թերևս ավելի շատ կցանկանար լինել ՏԻՄ կառույցին վերահսկող որևէ կառույցի անդամ, քանի որ նա գտնում է, որ լինելով ՏԻՄ-ի անդամ չի կարող այնքան բան փոխել և հասնել հաջողության, որքան դա հնարավոր է իրականացնել վերահսկողության միջոցով:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքում առանձնացվում են հետևյալ հիմնախնդիրները:

- զբաղվածության հիմնախնդիր

- կրթական համակարգին առնչվող հիմնախնդիրներ
- զործազրկություն և աղքատություն
- կոռուպցիոն ռիսկերի առկայություն
- ընտանիքում՝ որպես սոցիալական փոքր խմբում, կարծրացած մտածելակերպ և դաստիրակության հիմնախնդիրը
- գենդերային պատկանելիությամբ և սեռային կողմնորոշմամբ պայմանավորված հիմնախնդիր
- իրավունքների ոտնահարման հիմնախնդիր
- ազատ ժամանցի կազմակերպման հիմնախնդիր
- առողջապահական և առողջ ապրելակերպին առնչվող հիմնախնդիրներ:

Զբաղվածության հիմնախնդիր

Գյումրու երիտասարդները դեռևս ուսումնական հաստատություններում ուսումնառության տարիներին կենտրոնացված են այն հարցի շուրջ, թե որտեղ և ինչպես են պատրաստվում աշխատել ավարտելուց հետո: Դիպլոմավորված մասնագետ դառնալուն պես՝ նրանք փորձում են դիմել տարբեր կառույցների, իրենց զբաղվածությունը ապահովելու համար և այստեղ առնչվում են գործազրկության հիմնախնդիրների հետ: Երիտասարդների առջև «փակ են դռները», նախ, քանի որ գործատուն մեկնաբանում է, որ երիտասարդը չունի աշխատանքային փորձ և չի կարող ընդգրկվել տվյալ աշխատակազմ: Անգամ, եթե երիտասարդը հանդիսանում է որևէ ՀԿ-ի անդամ, շատ գործատուներ չեն համարում, որ այդ փաստը կարող է հատկանշական լինել և որևէ կերպ ազդել իրենց ընդունած որոշման վրա: Գործատուն հիմնականում կարևորություն չի տալիս ՀԿ անդամ, կամավոր լինելու փաստին: Քանի որ հայ հասարակության մեջ դեռևս ձևավորված չէ կամավորություն իրականացնելու մշակույթը: Եվ շատ հաճախ հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ կամավորությունը իսկապես կարող է մեծ խթան հանդիսանալ հետագա մասնագիտական գործունեության համար:

Հարցվողներից չորսը վստահ են, որ բացի նրանից, որ նորավարտ մասնագետից պահանջվում է աշխատանքային փորձ, նա նաև ստիպված է ապացուցել, որ ինքը պատասխանատու և բանիմաց մարդ է, ինչպես նաև պատրաստակամ է իրականացնել աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքները պատշաճ մակարդակի վրա: Այսինքն՝ երիտասարդի նկատմամբ առկա է կարծրատիպային վերաբերմունք, համաձայն որի, նա չի կարող ճիշտ և պատասխանատու կերպով կատարել աշխատանքը:

Գյումրի քաղաքի երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրները բխում են նաև հետևյալից. քաղաքում բավականին քիչ են այն կազմակերպությունները, որտեղ հնարավոր է աշխատանք գտնել, իսկ գործող կազմակերպություններն էլ վճարում են բավականին ցածր աշխատավարձ: Այդ պատճառով երիտասարդությունն իր հայացքն ուղղում է դեպի մայրաքաղաք, քանի որ վստահ է, որ այնտեղ կգտնի առավել բարձր վարձատրվող աշխատանք: Բացի դա, Գյումրի քաղաքում առկա կարծրատիպային մտածելակերպը թույլ չի տալիս երիտասարդին ազատ գործել և կարգավորել իր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Օրինակ, եթե երիտասարդը ցանկություն է հայտնում աշխատել սրճարանում, որպես մատուցող, ապա նրա ցանկությունը միանգամից մերժվում է ընտանիքի կողմից, քանի որ հասարակության կողմից կարժանանա պիտակավորման,

որպես անբարո վարքագծի տեր անձ: Այդ պատճառով երիտասարդները գերադասում են մեկնել մայրաքաղաք և փորձել գտնել մի փոքր ավելի բարձր վարձատրվող աշխատանք:

Այլ խնդիր է արական սեռի ներկայացուցիչների համար: Նախ՝ շատ երիտասարդներ ստիպված են լինում կիսատ թողնել ուսումը և գտնել որևէ վարձատրվող աշխատանք, որպեսզի կարողանան ապահովել ընտանիքի կարիքները: Քանի որ երիտասարդի ուսերին է ընկած ընտրանքին ապահովելու խնդիրը, հետևաբար նա չի կարողանում շատ ժամանակ տրամադրել իր մասնագիտական աճն իրականացնելուն և ստիպված է լինում մեկնել արտերկիր, որպեսզի ինչ-որ կերպ կարողանա լուծել իր ընտանիքի կենցաղային խնդիրները: Այստեղ մենք բախվում ենք ևս մեկ մեծ հիմնախնդրի՝ միգրացիայի հետ: Արդյունքում երիտասարդները հեռանում են Գյումրի քաղաքից, քաղաքի զարգացումն ապահովող և շարժիչ օղակն հետզհետե փոքրանում է:

Կրթական համակարգին առնչվող հիմնախնդիրներ

Այսօր ՀՀ մեծությամբ երկրորդ քաղաքում հիմնախնդիր է դարձել երիտասարդների կրթության ապահովման խնդիրը: Նախ՝ դպրոցներում բարձր դասարաններում հիմնականում աղջիկներ են, տղաները անհամեմատ ավելի քիչ են, քանի որ վերջիններս ստիպված են լինում ուսումը կիսատ թողնել, որպեսզի օգնեն իրենց ընտրանքներին: Բարձրագույն կրթություն ստանալ ցանկացող երիտասարդները շատ են, սակայն նրանք չունեն բավականաչափ հարկավորություններ և ի վիճակի չեն ուսանել մասնավոր կամ պետական հաստատություններում՝ վճարովի համակարգում: Երիտասարդներից շատերը կիսատ են թողնում, շատերն էլ անգամ չեն փորձում դիմել բարձրագույն հաստատություն, քանի որ չունեն համապատասխան հնարավորություն: Խմբի մասնակից երիտասարդներից մեկը նշեց «այն կրթությունը, որը մենք համարում ենք բարձրագույն, իրականում այնքան էլ բարձրագույն չէ: Դպրոցական հասակում, երբ մտածում էի սովորել բարձրագույն հաստատությունում, պատկերացնում էի ինձ, որպես արդեն որակավորված մասնագետի, ով կարող է աշխատել համապատասխան ոլորտում, սակայն արդեն իսկ գտնվելով բուհական կառույցում և ստանալով կրթություն, հասկացա, որ իրականում մեր կրթական համակարգը բավականին թերի է»:

Երիտասարդների կարծիքով այսօր Գյումրիում գործող ոչ մի ուսումնական հաստատություն չի տրամադրում համապատասխան գիտելիք: Դա պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ՝

- դասախոսն ինքը հիմնականում շահագրգռված չէ կրթել ուսանողին, քանի որ նա ունի գումար վաստակելու խնդիր և նրան չի մտահոգում ուսանողի՝ որպես ապագա մասնագետ կայանալու հարցը,
- դասախոսական կազմը հիմնականում չի մասնակցում կրթական, վերապատրաստման ծրագրերին, այդ իսկ պատճառով կրթության մակարդակը աճելու, զարգանալու փոխարեն՝ հետզհետե դառնում է թերի և ոչ լիարժեք,
- ուսանողներից շատերը հաճախում են ուսումնական հաստատություններ և ստանում են դիպլոմը զուտ որպես պարտականություն, կամ ինչպես խմբի անդամներից մեկը նշեց «ապագա օժիտ»: Այդ պատճառով քաղաքում մենթալիտետը թույլ չի տալիս երիտասարդին կայանալ, որպես մասնագետի,
- երիտասարդների կարծիքով ուսուցիչները, դասավանդողները, դասախոսները շատ են, բայց բանիմաց մասնագետները քիչ են, իսկ կրթական մակարդակը ցածր:

Բացի վերը նշվածից, երիտասարդներից մեկը նշեց, որ կրթությունը Գյումրիում նույնատիպ է: Քաղաքում գործող համալսարանները ունեն մի քանի ֆակուլտետներ և երիտասարդը, ով չի կարող տեղափոխվել մայրաքաղաք, իր նախընտրած ֆակուլտետում սովորելու համար, ստիպված է բավարարվել Գյումրիում առկա ուսումնական հաստատություններով: Այսպես, օրինակ, խմբի անդամներից մեկը նշեց, որ ինքն ունի մեծ ցանկություն ուսումնասիրել մենեջմենթ, սակայն որևիցե հաստատությունում չկա համապատասխան ֆակուլտետ: Որքան էլ ինքը նպատակասլաց լինի և փորձի ստանալ գիտելիք իրեն հետաքրքրող ոլորտի վերաբերյալ համացանցի կամ գրականության օգնությամբ, միևնույն է նա կարող է ստանալ ստանդարտ գիտելիք, բայց երբեք՝ պրակտիկ: Ի դեպ, պրակտիկ աշխատանքները բոլորովին բացակայում են կրթական համակարգից և ուսանողը երբևիցե չի կարող հասկանալ, թե ինչպես կկիրառի իր տեսական գիտելիքները գործնականում: Երիտասարդներին անհանգստացնում է այն հարցը, թե ինչի համար են անհրաժեշտ այդքան շատ թվով մանկավարժներ, սակայն դրա հետ մեկտեղ կան մասնագիտություններ, որոնց մասին իրենց բուհերում խոսք անգամ չկա: Երիտասարդներից մեկը նշեց. «երբ բացում եմ աշխատանք առաջարկող որևէ կայք, շատ եմ հանդիպում հայտարարություններ, որտեղ նշվում է, որ պահանջվում է տնտեսագետ, իրավաբան և այլն... Սակայն մյուս կողմից մենք ունենում ենք բավականին շատ իրավաբանական կամ տնտեսագիտական ֆակուլտետների շրջանավարտներ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կրթությունը այնքան ցածր մակարդակի վրա է, որ անգամ այդքան նորավարտ մասնագետները չեն կարողանում համալրել աշխատաշուկան>>:

Երիտասարդներից մեկը նշեց նաև, որ դասախոսներից շատերը վերաբերվում են ուսանողներին, որպես ստորադասի, ինչը մեծ խոչընդոտ է հանդիսանում ուսանողի համար, որպեսզի վերջինս կարողանա ազատ և անկաշկանդ ինքնաարտահայտվել և ինքնահաստատվել, որպես ապագա մասնագետ:

Գործազրկություն և աղքատություն

Կրթական մակարդակը և զբաղվածության ապահովումը ուղղակիորեն բերում են անձի, որպես հասարակության լիիրավ, աշխատանքով ապահովված, կայուն վիճակում գտնվող, ինքնահաստատված անհատի ձևավորմանը ու կայունացմանը: Հակառակ դեպքում մենք ունենում ենք աճող գործազրկություն, որն էլ հանգեցնում է աղքատության: Համայնքային երիտասարդների կարևորագույն խնդիրներից է հանդիսանում օրեցօր աճող գործազրկության բարձր ցուցանիշները: Համաձայն ազգային-վիճակագրական ծառայության 2013 թվականի առաջին եռամսյակի ցուցանիշների, Գյումրի քաղաքում գործազրկությունը աճել է 8,8 տոկոսով, որը նախորդ տարվա համեմատ ամենաբարձր ցուցանիշն է բոլոր մարզերի շրջանում: Նույն եռամսյակում, մարզում աշխատանք փնտրողները կազմում են 9437 մարդ, իսկ գործազուրկների թվաքանակը 8167 մարդ: Սոցիալ-տնտեսական ծանր ոչ կայուն վիճակը նպաստում է երիտասարդության ինքնադրսևորման և ինքնահաստատման պակասին, որն էլ իր հերթին առաջացնում է թերարժեքության զգացում՝ սեփական հնարավորությունների, կարողությունների և իներտ վարքագծի դրսևորմանը: Մյուս կողմից՝ հասարակական բացասական երևույթների դրսևորմամբ պայմանավորված՝ առաջանում է անվստահություն պետական կառույցների և երկրի ապագայի նկատմամբ: Այս ամենի արդյունքում, նախ երիտասարդներից շատերը չունեն հնարավորություն ստանալու համապատասխան կրթություն, ինչպես նաև արդեն չունեն կրթվելու ցանկություն: Բացի դա, ինչպես արդեն նշվել է, ցածր աշխատավարձը, աշխատատեղերի պակասը, հասարակական վերաբերմունքը երիտասարդների նկատմամբ բերում է գործազրկության թվաքանակի աճի, և հետզհետե կանգնում ենք աղքատության շեմին: Այս բոլոր հիմնախնդիրները իր վրա կրող երիտասարդը ապագայում ստեղծում է իր անձնական ընտանիքը և կանգնում է սեփական ընտանիքի գոյատևման խնդրի առջև: Տվյալ դժվարին ճանապարհին անցած երիտասարդը հազիվ թե կարողանա ապագայում իր երեխային ապահովել համապատասխան պայմաններով և օգնել ստանալ որակյալ կրթություն: Արդյունքում, տեսնում ենք մի ամուր և փակ շղթա, որը հետզհետե ավելի է կարծրանում և այն կոտրելը չափազանց դժվարանում է: Այսօրվա երիտասարդը հանդիսանում է պետության ապագան կերտողը, այսօրվա բժշկական հաստատությունում ուսում ստացող ուսանողը հանդիսանում է երկրի ապագա բժիշկը: Պետությունը պարտավոր է հոգ տանել երիտասարդների մասին և փորձել կարգավորել նրանց հիմնախնդիրները: Այլապես մենք ապագայում կունենանք բազմաթիվ և լուրջ խնդիրներով զինված մի հասարակություն, երիտասարդների անդադար միգրացիոն հոսք, ինչն էլ կհանգեցնի ծանր աղքատության և ծերացող հասարակության:

Կոռուպցիոն ռիսկերի առկայություն

Գյումրու երիտասարդությունը ներկայումս բախվում է մեկ այլ շատ կարևոր հիմնախնդրի հետ՝ կոռուպցիայի առկայությունը մեր հանրապետությունում, մասնավորապես Գյումրի քաղաքում: Երիտասարդի ընտանիքը դպրոցն ավարտելուն պես փորձում է գումար հայթհայթել որպեսզի իր երեխան ստանա բարձրագույն կրթություն, բացի այն, որ ուսանողը ստիպված է վճարել իր ուսման վարձը, հաճախ նաև ստիպված է գումար հայթայթվել գնահատականի համար: Երիտասարդներից մեկը հաստատեց այն, որ Գյումրու բոլոր ուսումնական հաստատություններում առկա է կոռուպցիայի խնդիրը: Ուսանողը չի կարող լիարժեք և օբյեկտիվ գնահատվել իր գիտելիքի դիմաց, քանի որ գրեթե բոլոր դասախոսները ակնկալում են ստանալ որոշակի գումար քննություններ կամ ստուգարքներ անցկացնելիս: Խմբի անդամներից մեկը պատմում է, որ իր դասախոսներից մեկը հայտարարում էր, թե ինքը ընտանիք է պահում: «Եկեք 5000 դրամով բավարարվենք և ավարտենք քննական գործընթացը»: Անգամ եղել է դեպք, որ ուսանողը 500 դրամով ստացել է քննության գնահատականը: Այստեղ, ծագեց մի փոքր հակասական իրավիճակ: Երիտասարդներից հինգը փորձեցին հակադրվել այդ մտքին: Նրանք գտնում են, որ ամեն ինչ կախված է ուսանողի նպատակասլաց և համառ լինելուց, և համարում են, որ դասախոսը չի կարող չնշանակել համապատասխան գնահատականը, եթե ուսանողը լիարժեք տիրապետում է առարկային:

Երիտասարդներից մեկը նշում է, որ գուցե իսկապես դասախոսը չնշանակի անբավարար գնահատական, այլ բավարար կամ լավ, այնուամենայնիվ գնահատականը կարող է պատճառ լինել կրթաթոշակներից զրկվելու համար, կամ էլ հետագայում կրթության ավելի բարձր մակարդակներում ուսանելու համար:

Երիտասարդներից մեկը նշում է, որ իր բարեկամուհին նույնպես ստիպված էր գումար վճարել գնահատականի համար: Նա դիմում է ծնողներին, վերցնում գումարը, սակայն իր համառության և նպատակասլացության շնորհիվ կարողանում է ստանալ գնահատականը՝ իրեն տրամադրած գումարը ծախսելով Ամանորին բնակարանի համար արդուզարդ գնելու համար:

Երիտասարդը նշում է, որ ամեն բան կախված է ուսանողի մարդ տեսակից: Եթե նա չցանկանա, երբեք գումարով գնահատական չի ստանա:

Հարցման մասնակիցները նշում են, որ կոռուպցիայի խնդրին հանդիպում են նաև աշխատանքի ընդունվելիս: Ի դեպ, նրանք համարում են, որ մասնավոր ձեռնարկություններին դա չի վերաբերվում, քանի որ մասնավոր ձեռնարկատերը չի ընդունի աշխատանքի վատ մասնագետին: Այս խնդիրն առկա է միայն պետական կառույցներում:

Խմբի անդամներից մեկը պատմում է, որ ինքը դիմելով մի կառույցի աշխատանքի ընդունվելու համար, ականատես է եղել հետևյալ դեպքին: Ինքնակենսագրականի այն կետը, որտեղ անհրաժեշտ է նշել երաշխավորող անձի տվյալները, նրան մեկնաբանել են այսպես. «նշեք այն անձի տվյալները, ով հետագայում կարող է ոչ թե ինֆորմացիա տրամադրել Ձեր մասին, այլ մենք կարող ենք դիմել նրան օգնության նպատակով»:

Հետևաբար, սա թաքնված կոռուպցիայի մի ձև է: Այն կարող է օգնել գործատուին հետագայում ստանալ անվճար ծառայություն՝ երիտասարդին աշխատանքի ընդունելու դիմաց:

Բացի վերը քննարկված հարցից, երիտասարդները նշում են նաև, որ երիտասարդի նկատմամբ խտրականության պատճառ կարող է հանդիսանալ նաև կուսակցական պատկանելությունը: Ըստ նրանց տվյալների, եթե երիտասարդը հանդիսանում է իշխանական կուսակցության անդամ, ապա նրա առջև բաց դռները շատ, հակառակ դեպքում նա մշտապես հանդիպում է խտրական վերաբերմունքի:

Երիտասարդները գտնում են, որ, հնարավոր չէ կոռուպցիան իսպառ վերացնել, բայց քայլ առ քայլ կարելի է հասնել որոշակի առաջընթացի: Բացի դա, Գյումրու երիտասարդության կարգախոսն է. «Հնարավոր է փոխել ամեն ինչ»: Երիտասարդների կարծիքով իրենց կարգախոսը մեծ խթան է հանդիսանում առաջ շարժվելու և փոփոխություններ կատարելու համար:

Ընտանիքը՝ որպես սոցիալական փոքր խումբ: Կարծրացած մտածելակերպ և դաստիարակության հիմնախնդիրներ

Ընտանիքը, երեխայի ծննդյան պահից և կյանքի ամբողջ ընթացքում, զբաղվում է նրա կրթության ապահովման, զարգացման, դաստիարակության և այլ հարցերով :

Գյումրու երիտասարդները համարում են, որ ընտանիքը պետք է երեխային ճիշտ ուղու վրա դնի դեռ վաղ հասակից: Նախ, դեռ վաղ հասակից, երեխայի մոտ պետք է սերմանել սեր և հարգանք կրթության հանդեպ:

Ծնողը պետք է սովորեցնի երեխային /հետագայում նաև ուսանողին/, որ կրթության դիմաց վճարելով, նա պարտավոր է ստանալ լիարժեք կրթություն, այլ ոչ թե բավարարվել դիպլոմով:

Ծնողը պետք է սովորեցնի երեխային /երիտասարդին/ պաշտպանել իր իրավունքները և թույլ չտալ ցանկացած կառույցում ոտնահարել դրանք, լինի դա թե՛ բարձրագույն ուսումնական հաստատություն, թե՛ դպրոց, և թե՛ միջանձնային փոխհարաբերություններ:

Բացի վերը նշվածից, կարծրատիպային վերաբերմունքը խիստ ազդեցություն է թողնում երիտասարդի կենսագործունեության վրա: Այն, որ աղջիկը չպետք է աշխատի այս կամ այն մասնագիտությամբ, չի կարող հեռանալ ընտանիքից և փորձել աշխատանք գտնել մեկ այլ քաղաքում և հաճախ հանդիպող նմանատիպ այլ երևույթներ դարձել են կարծրացած գաղափարներ, որոնք, ցավոք սրտի փոխանցվում են սերնդեսերունդ:

Երիտասարդները գտնում են, որ անհրաժեշտ է ձերբազատվել այսպիսի կարծրատիպերից, քանի որ վերջիններս խանգարող հանգամանք են հանդիսանում հայ երիտասարդի ինքնադրսևորման և ինքնահաստատման համար:

Գենդերային պատկանելիությամբ և սեռային կողմնորոշմամբ պայմանավորված հիմնախնդիր

Ինչպես արդեն բազմիցս նշվեց, Գյումրի քաղաքում առկա է խտրական վերաբերմունք՝ պայմանավորված գենդերային պատկանելությամբ: Աղջիկները հիմնականում ենթարկվում են նման խտրական վերաբերմունքի, քանի որ ի սկզբանե աղջիկը դաստիարակվում է որպես ապագա մայր և կին: Այդ պատճառով նրա կրթությունը և հետագա մասնագիտական գործունեությունը երկրորդական հարց է և' ընտանիքում, և' հասարակությունում, և ' տարբեր հաստատություններում:

Խմբի անդամներից մեկը բարձրաձայնեց մեկ այլ; հարց: Նա վստահ է, որ երիտասարդների շրջանում ամենից շատ տուժում և խտրական վերաբերմունքի են արժանանում նույնասեռականները: Նրանց հիմնախնդիրները առավել մեծ են և խորքային, քանի որ, բացի վերոնշյալ բոլոր հիմնախնդիրներից, որոնք կրում են իրենց վրա որպես երիտասարդ, նրանք ունեն նաև սեռային կողմնորոշման հետ կապված խնդիր: Այս հիմնախնդիրն առաջանում է դեռևս դպրոցական հասակից և ուղեկցում ամբողջ կյանքի ընթացքում: Խտրական վերաբերմունքը, անտեսումը, շատ հաճախ արհամարհանքը, իրավունքների ոտնահարումը հանգեցնում է անձի ոչ լիարժեք զարգացման, բարդույթավորված անհատի ձևավորման, ով կորցնում է ամեն տեսակի հույս և վստահություն սեփական պետության նկատմամբ և ստիպված լքում է հայրենիքը, փորձելով ինքնադրսևորվել, ինքնահաստատվել մեկ այլ երկրում:

Իրավունքների ոտնահարման հիմնախնդիր

Իրավունքների ոտնահարման հիմնահարցը մեծ խնդիր է նաև Գյումրիում՝ երիտասարդների շրջանում: Գյումրու երիտասարդի իրավունքները ոտնահարվում են.

- դպրոցում,
- բարձրագույն ուսումնական հաստատություններում,
- գործատուի կողմից՝ աշխատանք փնտրելիս,
- աշխատավայրում,
- տեղական ինքնակառավարման մարմիններում:

Երիտասարդները գտնում են, որ դրա հիմնական պատճառը տեղկացված չլինելն է: Նրանք չեն տիրապետում այն օրենսդրական դաշտին, իրավական նորմերին, որոնք պաշտպանում են երիտասարդի իրավունքները:

Ազատ ժամանցի կազմակերպման հիմնախնդիր

Երիտասարդներից երկուսը նշեցին, որ իրենք ունեն ազատ ժամանցի կազմակերպման խնդիր: Հատկապես երեկոյան ժամերին Գյումրու երիտասարդությունը հիմնականում չունի ազատ ժամանակը կազմակերպելու հնարավորություն: Նրանք գտնում են, որ Գյումրիում չկան բավականաչափ վայրեր, որտեղ երիտասարդությունը կարող է անց կացնել իր երեկոյան հանգիստը, ազատ ժամանակը: Չկան համապատասխան միջոցառումներ, համերգներ, որոնք կարող են լինել թե' մանկապատանեկան, թե' հասարակության առավել հասուն անդամների համար:

Երիտասարդները նշում են, որ սա պատճառ է հանդիսանում, որպեսզի երիտասարդներից շատերը իրենց ժամանակը վատնեն անիմաստ և գուցե նաև վնասակար զբաղմունքների վրա:

Որոշակի կենտրոնների, պատմամշակութային հաստատությունների հիմնումը և բազմազանությունը կարող են զերծ պահել Գյումրու երիտասարդությանը նման տեսակի ապրելակերպից: Ավելին, դա կնպաստի մշակույթի ճանաչմանը, մշակութային արժեքների տարածմանը և հայ մարդու լիարժեք կայացման գործընթացին:

Առողջապահական և առողջ ապրելակերպին առնչվող հիմնախնդիրներ

Այսօր Գյումրու երիտասարդների շրջանում արմատացած է ծխելը: Հանրապետությունում առկա է թմրամոլության աճի միտում, որից Գյումրին զերծ չէ: Գյումրու մարզպետարանի Առողջապահության բաժնից ստացված տեղեկությունների համաձայն՝ գրանցված 669 թմրամոլներից 94-ը 18-30 տարեկաններ են:

Բացի դա, սեռավարակների աճի հետևանքով աճում է ՄԻԱՎ-ի դեպքերի թիվը: Համաձայն նույն աղբյուրի, Գյումրիում գրանցված 264 սեռավարակներից 198-ը ևս 18-30 տարեկաններ են: Այսպիսի հիվանդությունների ժամանակին չախտորոշելու և չբուժելու դեպքում, հանգում ենք առավել դժվար լուծվող խնդիրների:

Երիտասարդների համար հիմնական տեղեկատվության աղբյուր են հանդիսանում ընկերներն ու շրջապատը, ինչպես նաև համացանցը, քանի որ ոչ մի հաստատություն չի տրամադրում երիտասարդին տեղեկատվություն սեռական դաստիարակության, առողջ ապրելակերպի, սեռավարակների և այլ հիվանդությունների բուժման կամ կանխարգելման վերաբերյալ: :

Առաջարկներ

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքում ստացված տվյալները ամփոփելով, վերլուծելով և հանգելով որոշակի եզրակացության, առաջադրվել են հետևյալ առաջարկները: Համաձայն ֆոկուս-խմբի մասնակիցների կարծիքների հիմնախնդրի լուծման միակ ուղին է.

- Փոփոխել պետական համակարգը հիմնովին: Պետական ապարատի ամբողջական վերափոխման արդյունքում միայն կարելի է հասնել որոշակի արդյունքի: Քանի որ հիմնախնդիրներն այնքան շատ են և արմատացած, որ միայն այդ ճանապարհով կարելի է հասնել որևէ արդյունքի:

Կարճաժամկետ լուծումներ.

- Ստեղծել երիտասարդական հանրային խորհուրդ, որն անմիջականորեն կզբաղվի երիտասարդների հիմնախնդիրներով: /պատասխանատու՝ տարածաշրջանում գործող ակտիվ ՔՀԿ/
- Տրամադրել տարածք, որտեղ քաղաքի շնորհալի երիտասարդները հանրավորություն կունենան ժամանակ առ ժամանակ կազմակերպել ցուցահանդեսներ, ներկայացնել իրենց աշխատանքները (կերպարվեստ, կարուձև, հելունագործություն և այլն): Հնարավոր կլինի նաև կազմակերպել միջոցառումներ՝ մասնավորապես տոնական օրերին: /պատասխանատու՝ Գյումրիի քաղաքապետարան/
- Իրականացնել արշավներ քաղաքի համալիրներ, մշակութային այլ տեսարժան վայրեր: /պատասխանատու՝ ՏԻՄ և քաղաքում առկա հասարակական կազմակերպություններ/
- Ստեղծել համապատասխան տեղեկատվական բազա՝ կրթական, առողջապահական, սոցիալ-մշակութային, իրավապաշտպանության և այլ ոլորտների վերաբերյալ: Բազայում առկա տեղեկատվությունը հասանելի կլինի բնակչությանը, մասնավորապես երիտասարդությանը: /պատասխանատու՝ Երիտասարդական հանրաին խորհուրդ/

Երկարաժամկետ լուծումներ.

- Առաջարկել ՀՀ Ազգային Ժողովին ստեղծել օրենք՝ համաձայն որի երիտասարդները մեկ տարի շարունակ կազատվեն հարկ վճարելուց, եթե առաջարկեն բիզնես ծրագրեր: Առաջարկը կխթանի քաղաքի բիզնեսի զարգացմանը և մեծ խոչընդոտ կհանդիսանա արտագնա աշխատանքների և առհասարակ արտագաղթի համար: /պատասխանատու՝ ՀՀ Ազգային Ժողով/

- Բարձրացնել համայնքի երիտասարդների իրավագիտակցության մակարդակը՝ սեմինարների, ուսուցողական ծրագրերի և այլ դասընթացների միջոցով: /պատասխանատու՝ Երիտասարդական հանրային խորհուրդ/
- Իրականացնել երիտասարդների հիմնախնդիրների կարգավորման համար քաղաքապետարանի կողմից ծախսվող գումարների մշտադիտարկում: /պատասխանատու՝ Երիտասարդական հանրային խորհուրդ/
- Իրականացնել դասախոսական կազմի, ամբիոնների, դեկանատների աշխատանքների գնահատում՝ ԲՈՒՀ-երում: Գնահատումն իրականացնել նախապես ստեղծված անանուն հարցաթերթիկի միջոցով, այնուհետև կիրականացվի տվյալների հավաքագրում, վերլուծություն և եզրակացություն: Որպես օրինակ կարող է ծառայել Երևանի Պետական Համալսարանում իրականացվող գնահատման ծրագիրը: Ծրագիրը կնպաստի կրթական համակարգի մակարդակի բարելավմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: /պատասխանատու՝ Կրթության և գիտության նախարարություն/

Շիրակի մարզի Գյումրի, Մարալիկ, Արթիկ քաղաքների սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն

Որպես վարչատարածքային միավոր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզը կազմվել է 1995-ի դեկտեմբերի 4-ին և ներառում է իր մեջ Ախուրյանի, Ամասիայի, Անիի, Աշոցքի ու Արթիկի նախկին վարչական շրջանների տարածքները: Տարածությունը 2681 կմ/քառ: Մարզի մեջ են մտնում Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքները: Մարզկենտրոնն է Գյումրին:

Հայաստանի Հանրապետությունում Շիրակի մարզը մշտապես աչքի է ընկել որպես մշակութային, արդյունաբերական, կրթական բարձր մակարդակ ունեցող մարզ:

Այսօր, համաձայն վիճակագրական տվյալների, Շիրակի մարզում տարեցտարի աճում է արտագաղթը: Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2010-2013 թվականների սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի՝ Շիրակի մարզում նախատեսվում է իրականացնել բարեփոխումների ծրագիր ուղղված առողջապահության, կրթության, սպորտի, մշակութային, սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության, բնապահպանության և քաղաքաշինության ոլորտներին: Այդուհանդերձ, բազմաթիվ դիտարկումներից, հետազոտական տվյալներից կարելի է եզրակացնել, որ մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակը ոչ թե բարելավվում, այլ հակառակը, հետզհետե վատթարանում է: Այդ պատճառով բնակչության մեծ մասը տեղափոխվում է Երևան, կամ ինչն ավելի վատ փաստ է՝ լքում է հայրենիքը: Ոչ ոքի համար էլ գաղտնիք չէ, որ արտագաղթող բնակչության մեծ մասը կազմում են միջին և երիտասարդ տարիքի անձիք:

Սոցիոլոգիական հետազոտության ֆոկուս-խմբի մասնակիցները հանդիսանում են 16-35 տարիքային խմբի երիտասարդներ: Քննարկման մասնակից երիտասարդներից չորսը հստակ արտահայտեցին այն կարծիքը, որ իրենք ևս ունեն մեծ ցանկություն լքել հանրապետությունը: Ցավոք, մասնակիցներից չորսն էլ հանդիսանում են Մարալիկ քաղաքի բնակիչներ: Խմբերի մնացած մասնակիցները հիմնականում նշում են, որ իրենք փորձում են գտնել ուղիներ Երևան տեղափոխվելու և աշխատանք գտնելու համար:

Եթե ընդհանուր համեմատություն անցկացնենք երեք քաղաքների՝ Գյումրու, Մարալիկի և Արթիկի երիտասարդական խմբերի միջև, ապա կարելի է նշել հետևյալ հատկանիշները, որոնք առավել ընդգծված և տեսանելի էին հետազոտության ընթացքում: Գյումրու երիտասարդները բոլորը ընդգրկված են հասարակական կազմակերպությունների աշխատանքներում և բաց չեն թողնում ոչ մի հնարավորություն ակտիվ և արդյունավետ

աշխատանք իրականացնել ցանկացած ոլորտում: Երիտասարդները իրականացնում են մշակութային միջոցառումներ, շահերի պաշտպանությանը, իրավունքների պաշտպանությանն ուղղված հավաքներ, զբաղվում են ինքնակրթությամբ և չեն նահանջում, անգամ երբ հանդիպում են անհաղթահարելի խոչընդոտների: Երիտասարդներից մեկը նույնիսկ հեռացվել էր համալսարանից դասախոսին ընդդիմանալու և իր շահերը պաշտպանելու պատճառով: Սակայն այս երևույթը չի ստիպում նրան նահանջել կամ կորցնել ինքնատիրապետումն ու համառությունը:

Եթե անդրադառնանք Արթիկի երիտասարդական խմբին, ապա անհրաժեշտ է նշել, որ խումբն իրականում կարծես այնքան էլ չէր գիտակցում, թե ինչ խնդիրներ կարող է ունենալ: Խմբի անդամները քննարկման սկզբում անընդհատ նշում էին, որ իրենց մտահոգում է ժամանցի կազմակերպման հիմնախնդիրը, սակայն, քննարկման զարգացման փուլում, այլ մտահոգիչ հիմնախնդիրներ ևս ի հայտ եկան: Համեմատած Գյումրու երիտասարդական խմբի, Արթիկի երիտասարդությունն ավելի քիչ փորձ, հմտություններ ունի՝ կապված ՀԿ - սեկտորի, աշխատաշուկայի հետ: Նրանք կարծես հարմարվել են իրենց առօրյային և պատկերացնում են իրենց կյանքը հենց այնպիսին, ինչպիսին որ կա: Խմբի այն անդամներն, ովքեր անդամագրված չեն հասարակական կազմակերպություններում, պատասխանում են, որ իրենք ցանկություն չունեն անդամագրվել, քանի որ զբաղված են, ամբողջ ժամանակն անց են կացնում ուսման համար, կամ կարողանում են գտնել զբաղմունք համակարգչի դիմաց: Այնուամենայնիվ, այս կարծիքն արտահայտեցին խմբի անդամներից միայն հինգը, իսկ մնացածին մտահոգում են թե' առողջապահական, թե' կրթական, թե' զբաղվածության և այլ հիմնախնդիրներ:

Մարալիկն իր սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակով կարծես մրցակցությունից դուրս լինի՝ համեմատած Գյումրիում և Արթիկում տիրող իրավիճակին: Մարալիկի երիտասարդությունն այնքան ծանր և դժվարին կացության մեջ են, որ իրականում նրանք անգամ չեն էլ ցանկանում քննարկել որևէ հիմնախնդիր, կամ մի գուցե ավելի ճիշտ կլիներ նշել, որ չգիտեն, թե որ հիմնախնդրից սկսեն քննարկումն ու որտեղ ավարտեն: Երիտասարդները չունեն բացարձակ ոչ մի առաջընթացի հույս և չեն կարող գտնել հիմնախնդիրների և ոչ մի լուծման տարբերակ: Նրանք գտնում են, որ այդ ծանր վիճակն այնքան խորն է ու արմատացած, որ ոչ մի փորձ չի կարող հանգեցնել դրական փոփոխության, այլ միայն պետական մակարդակով կարելի է գալ որոշակի առաջընթացի: Նրանք նշում են, որ քաղաքում աղքատությունը, գործազրկությունը, արտագաղթը այնպիսի

մեծ արագությամբ են աճում, որ ոչ մի ՀԿ, ոչ մի տեղական մարմին չի կարող լուծում տալ այդ իրավիճակին: Երիտասարդները հավատացնում են, որ նույնիսկ տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող կատարել փոփոխություններ, քանի որ իրենք ևս չունեն ֆինանսական հնարավորություններ, որպեսզի աջակցեն համայնքին: Անհրաժեշտ է հիմնային փոփոխություն, ամբողջ երկրի մասշտաբով:

Եթե ընդհանուր համեմատական անցկացնենք 3 քաղաքների միջև, ապա կարելի է նշել, որ Գյումրիում քիչ են աշխատատեղերը և կատարած աշխատանքի դիմաց երիտասարդները ստանում են ցածր աշխատավարձ և չեն կարողանում հոգալ սեփական կամ ընտանիքի կարիքները: Արթիկում գործող կառույցներն առավել սակավ են, ինչը ենթադրում է ավելի քիչ աշխատատեղեր: Այդ պատճառով Արթիկի երիտասարդությունը իր հայացքն է ուղղում դեպի Գյումրի, իսկ Գյումրու երիտասարդությունը՝ դեպի Երևան:

Գյումրիում բավականին տարածված է կոռուպցիան՝ հատկապես կրթական ոլորտում: Արթիկի երիտասարդներից շատերը ևս ստանում են կրթություն Գյումրիում: Թե' Արթիկի, և թե' Գյումրու երիտասարդությունը հավատացնում են, որ Գյումրիում կոռուպցիան հասնում է չափազանց մեծ տոկոսների: Երիտասարդներից բոլորը հաստատում են, որ գրեթե յուրաքանչյուր դասախոս փորձում է ուսանողից գումար վերցնել գնահատականի դիմաց: Իսկ ինչ վերաբերվում է Մարալիկի երիտասարդներին, ապա հարկ է նշել, որ երիտասարդներն ուղղակի չունեն հնարավորություն գնալ Գյումրի և ստանալ կրթություն: Մարալիկի երիտասարդները ստիպված են վճարել ճանապարհածախս միջքաղաքային տրանսպորտի համար: Սակայն ինչպես պետք է նա վճարի այդ գումարը, եթե իր ծնողը չի կարող լուծել «հացի խնդիրը»: Ի դեպ, Մարալիկը չունի նաև ներքին տրանսպորտ և բնակչությունը ստիպված է ոտքով տեղափոխվել քաղաքի մի ծայրից մյուս:

Գյումրու երիտասարդությունը պատրաստակամ է պաշտպանել իր շահերը և իրավունքները և իր հնարավորությունների սահմաններում պայքարում է կոռուպցիայի, ստեղծված իրավիճակի դեմ: Այս երևույթը կարելի է ասել բացակայում է Արթիկում և առավել ևս Մարալիկում: Իրավապաշտպանության հարցը անգամ հնարավոր չէր քննարկել վերջին երկու քաղաքներում, քանի որ երիտասարդները չգիտեն իրականում ինչ իրավունքներ ունեն, ինչպես պետք է պաշտպանեն իրենց շահերը և այլն: Անհրաժեշտ է ծրագրերի, սեմինարների միջոցով տեղեկացնել երիտասարդներին իրենց իրավունքների, իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:

Առավել ցավալի խնդիր է առողջապահության ոլորտին առնչվող հիմնախնդիրները: Մարալիկում բացակայում է ստացիոնար բուժօգնությունը, քանի որ քաղաքը չունի հիվանդանոց: Երիտասարդներից մեկը նշում է, որ ցանկացած իրավիճակում հիվանդին անհրաժեշտ է տեղափոխել մոտակա քաղաք, քանի որ Մարալիկում հիվանդին կարող են ցուցաբերել միայն առաջին բուժօգնություն: Ինչ վերաբերվում է Գյումրի և Արթիկ քաղաքներին, ապա այստեղ երիտասարդների կարծիքով բուժանձնակազմը բավականին բանիմաց և մասնագիտացված չէ: Բացի դա հիվանդանոցներում բացակայում են համապատասխան սարքավորումները, իսկ գոյություն ունեցող սարքավորումները հին են և ոչ այնքան որակյալ:

Գյումրիում, Արթիկում և Մարալիկում չկան համապատասխան ծրագրեր, սեմինարներ, որոնք կարող են ուսուցանել երիտասարդներին առողջ ապրելակերպ, տարրական հիգիենայի կանոններ, տրամադրել ինֆորմացիա սեռավարակների, ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման ու բուժման վերաբերյալ: Երիտասարդները այս ամենի վերաբերյալ տեղեկատվություն կարող են ստանալ միայն ընկերներից, շրջապատից: Ոչ մի գիտական-կրթական ինֆորմացիա նրանց հասանելի չէ:

Վատ սովորույթների ձեռքբերման պատճառ է հանդիսանում նաև ազատ ժամանցի ոչ ճիշտ կազմակերպումը, շատ հաճախ նաև կազմակերպման անհնարինությունը: Երիտասարդները չունեն ազատ ժամանակն անցկացնելու ոչ մի վայր և հնարավորություն: Նրանք անընդմեջ նշում են, որ ամեն երեկո նրանց միակ զբաղմունքը կարող է լինել համակարգիչը կամ գուցե քաղաքում մի փոքր զբոսանքը: Այնուամենայնիվ, Արթիկի և Մարալիկի երիտասարդների համար սա ևս անհնարին է, քանի որ համաձայն երիտասարդների կարծիքի քաղաքում երեկոյան ժամը յոթից հետո այլևս ոչ ոք չի լինում: Այդ պատճառով երիտասարդները, հատկապես իգական սեռի ներկայացուցիչները, ստիպված են անցկացնել ժամանակը միայն տանը:

Երիտասարդների համար բավականին մեծ խնդիր է նաև բնակչության մեջ արմատացած կարծրատիպային մտածելակերպն ու դաստիարակությունը: Այն առավել ցավալի և անհանգստացնող խնդիր է Արթիկի և Մարալիկի երիտասարդության համար: Սակայն այս երկու քաղաքներում երիտասարդները կարծես գրեթե հարմարվել են այն բանի հետ, որ օրինակ՝ աղջկան հարիր չէ գնալ այլ քաղաք ուսման կամ աշխատելու նպատակով, կամ երեկոյան չի կարելի դուրս գալ և զբոսնել քաղաքում: Գյումրու երիտասարդների խումբը ևս շեշտում է այն հանգամանքը, որ քաղաքում արմատացած կարծրատիպերը

խոչընդոտում են ազատ և անկաշկանդ գործել և ինքնարտահայտվել, սակայն երիտասարդները պայքարում են դրա դեմ և ամեն կերպ ձգտում են չդառնալ այդ երևույթի գերին: Նրանք միաբերան ասում են, որ ցանկացած բան իրենց ձեռքերում է և որքան էլ դժվար լինի, պետք է պայքարել և հասնել նպատակին: Ցավալին այն է, որ գտնվելով բավականին մոտ տեղակայված այդ երկու քաղաքներում՝ Արթիկում և Մարալիկում, երիտասարդներն արդեն իսկ ունեն այլ մտածելակերպ և գրեթե չունեն հույս և հավատ, որ մի գուցե հնարավոր է հասնել փոփոխության, ձերբազատվել այդ կապանքներից և գործել անկախ ու ազատ՝ առանց որևիցե գիտակցական կամ անգիտակցական մտքի թելադրանքի: